

# Ի՞նչ թ՞ու՞նի Մ՞եծ Օ՞ձ՞նի Յ՞նչ Ք՞նի Վ՞եր Ք՞նի Վ՞եր Ք՞նի

Պատմության մեջ կան դեպքեր եւ թուականներ որոնք կ'արտայայտեն ժողովուրդի մը նկարագրի մասնաճանաչակցությունները: Հայ ժողովուրդի պատմության մեջ Սարգստապատի հերոսամարտով սկզբարարող, Մեծ Հայրենականով շարունակող եւ Օռնիի ազատագրությանը եզրափակող 20-րդ դարը խորհրդանշան է պահանջատիրական կամքի հայ ժողովուրդի վճռականությանը:

Օռնիի ազատագրության ոգեկոչողը ուղղակիապես տառապանքի եւ զինուորական կորույթի սովորական յաղթանակի մը տոնավաճառն էր: Այդ յաղթանակի մեջ կը խտանայ անհրաժեշտ մեր ժողովուրդի յաջողությանը իրաւունքներուն վերադարձումը եւ գոյատևելու վճռականությունը: Օռնիի ազատագրությունը հայ վրիժառու գեներալ Մուրադի համար յաղթանակ է եւ հայ ժողովուրդի նորագոյն պատմության դասակարգող միաժամանակ: Ազատության այդ գագաթնակն էր դարձեալ, որ Մեծ Հայրենականի ժառանգորդները դրսևորեցին տասնամյակներու բռնատիրության լուծէն ազատագրելով Օռնիին: Հայ քաջորդներու արեսները կերտեցին գոյգ յաղթանակներու խորհուրդը մեր ժողովուրդին կը հրամայէ չմոռնալ անցեալը եւ գայն մտահորիզոնի վրայ ունենալով նայիլի դէպի ապագան:

Մայիսը խորհրդանշան է համազգային բախտորոշ իրարարձութիւններու: Այսօր մենք կ'ոգեկոչենք Մեծ Հայրենականի ու Օռնիի ազատագրության գոյգ յաղթանակները, սակայն միաժամանակ կը գիտակցենք, որ յաղթանակ մը կը մնայ կիսատ՝ եթէ գայն արժեւորողներու մօտ կը բացակայի ազգային գիտակցութիւնը, կը մնայ բովանդակազուրկ՝ երբ անոր կերտիչներուն յետնորդները ի վիճակի չեն ազգային արժանապատուութիւն փոխանցելու սերունդներուն, հայրենիքի կայունութիւնն ու ապահովութիւնը շփոթելով իրենց անձնական շահերուն հետ:

Ազատագրում է Օռնի, բայց գայն հայկական դիմազանով պահելը կը մնայ հարցերու հարցը: Ինչո՞ւ միջուկային ազատագրութիւնը, երբ Օռնիի ամրոցին վրայ հայկական դրօշը ծածանելէ 15 տարի ետք, հագիլ թէ մէկ քանի հազար բնակիչներով ապրող Օռնի կը շարունակէ մնալ կիսաբանդ, իսկ գրկանքներով ապրող բնակիչներուն մեծ մասը եթէ չեն բնակարար, որովհետեւ երթալիք տեղ չունին: Կ'սպայիմ Պաքոյի, Կիրովապատի եւ Ատրբայձանի այլ քաղաքներէն բռնի տեղահանումը հայեր:

Ժիշդ է, որ Օռնիի ազատագրութիւնը ժամանակակից հայոց պատմության պանծալի էջն է, սակայն անհրաժեշտ է պահպանել յաղթանակի ոգին, զարկ տալ քաղաքի վերաշինության ու բարգաւաճման, բարելաւել բնակիչներու կենցաղային պայմանները եւ ամենակարեւորը՝ հայրենասիրտ փոխարէն կազմակերպել հայրենասարձութիւն:

Ա.ՀԱՐՈՆ ՇԻՐՏԸՄԵԱՆ

## Մեկնաբանութիւն

# ԵՐՈՒՄԱՂԵՍԻ ԵՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԻՋԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ ԵՐԿԱՐ Է

Մեկնաբան Ժաքի Հոկի «Մարտիկ» օրաթերթին մէջ դիտել կու տայ, որ ի հեճուկս Իսրայէլի վարչապետ Էհուտ Օլմերթի համամտութեան, ամբողջական խաղաղութեան դիմաց Կոլանէն ամբողջական հեռացումիս, ապա Սուրիոյ հետ կարգաւորումի անաջնորդող ճամբան երկար կը մնայ:

Յօդուածագիրը կ'ըսէ. «Կոլանէն քաշուելու Իսրայէլի վարչապետի համամտութեան վերաբերող սուրիացի նախարարի խօսքերու հրապարակումին դէմ քննարկող վարչապետ է: Նոյնիսկ եթէ տեղեկագիրները ճիշդ ըլլան, ապա Օլմերթ սուրիացիներուն չներկայացուցայ, ինչ որ իր նախորդները չներկայացուցին: Նոյնիսկ եթէ սկզբունքային համամտութիւն տրուեցաւ հրաժարելու բարձրաւանդակէն, ապա Երուսաղէմի եւ Դամասկոսի միջեւ խաղաղութեան համաձայնութեան ճամբան շատ հեռու կը մնայ:

«8 տարիներէ ի վեր, այսինքն հակուցեալ նախագահ Յաֆէզ Ազատին հետ Իհուտ Պարաշի կառավարութեան կատարած բանակցութիւններու փլուզումէն ի վեր, սուրիական ուղեգիրը վստահութեան մեծ պակաս էր կը տառապի: Սոր բանակցութիւններու կողմէր չունինք, այլ երկու կողմերէն իրաքականիւրը իր պայմաններէն զիջումի կարիքը ունինք: Իսրայէլիւր կողմ լաւապէս գիտէ, թէ ինչ կ'ուզէ միւս կողմը, սակայն դժուարութիւն կը գտնուի:

Իսրայէլեան պահանջները եւ կ'ըսէ, թէ Իսրայէլ իրաւունք չունի պարտադրելու, թէ ուզէր են իր բարեկամները: Ինչպէս որ Սուրիան չի պահանջեր, որ Իսրայէլ խօսէ Ամերիկայի հետ իր յարաբերութիւնները, ապա Իսրայէլ կապ չունի Իրանի հետ Սուրիոյ յարաբերութեան հետ:

«Իրականութեան մէջ, երկու կողմերը անապահով մէջ չեն: Արդարեւ, Իսրայէլ Կոլանի մէջ կը գտնուի եւ մտահոգ չէ: Սուրիան ունի ուրիշ խնդիրներ, որոնք անելի կը մտահոգեն զինքը, ինչպէս օրինակ լիբանանեան հարցը, Իրաքի մէջ անխիտանական վիճակը եւ միջազգային պայքարի դիմագրաւումը:

«Կազայէն ձախող հեռացումէն ետք տարի ետք, դժուար է որ իսրայէլեան հակութեան պարտադրենք Սոր հեռացում մը, Նոյնիսկ եթէ ապահովութեան խաղաղութեան պիտի առաջնորդէ: Ի՛նչ կը սպասէ մեզի ուրեմ: Մեզի կը սպասէ ցուրտ խաղաղութիւն մը, ինչպէս որ նախագահ Ազատ յանձն առաւ անցալ Շաբաթ օր իր ճառի մէջ: Երկար ժամանակ պիտի անցնի Իսրայէլի վարչապետ մը համարձակելէն առաջ արմատախիլ ընել Կոլանի մէջ իրական բնակավայրերը, լեռի համ ունեցող խաղաղութեան համաձայնագիրի մը փոխարէն»:

ՌԱՍՏԱ ՀԱՅՏԱՐ  
(«Լաւար») Թարգմ.՝ Վ. Տ.

# ԸՍՏ ԱՐԹՈՒՐ ԱՂԱԲԵԿԵԱՆԻ ԶՈՍՈՎՈՆ ԻՆՔՆԻՆ ՆԱԽԱԳԷՊ Է

Աժ Պաշտպանութեան, Ներքին գործերու, Ազգային անվտանգութեան հարցերու յանձնաժողովի նախագահ, ՆԱԹՕ-ի խորհրդարանական վեհաժողովի մէջ Հայաստանի պատմութեան ղեկավար Արթուր Աղաբեկեան Քոստովոյի մէջ հանդիպումներ ունեցած է Քոստովոյի նախագահի, վարչապետի եւ այլ պաշտօնեաներու հետ եւ վերջիններս փոխանցած է իր նամակ-շնորհատրանսը՝ Քոստովոյի անկախացման կապակցութեամբ:

«Առատ»-ի թղթակից Մարգարիտ Տայեանի հետ գրոյցի ընթացքին, Աղաբեկեան յայտնած է, որ ինք հանդիպումներ ունեցած է նաեւ Քոստովոյի վարչապետի, ԵԱՀԿ առաքելութեան ղեկավար, դեսպան Թիմ Կոլդիմանի, ՄԱԿի գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչի եւ այլ պաշտօնեաներու հետ:

Կոյնորիք (Քոստովոյի խաղաղապահ զորքեր-ի մը) հրամանատարութեան հետ հանդիպման ժամանակ յայտնի դարձած է, որ հրամանատարութիւնը հետաքրքրուած է Ատրպէյձանի եւ

Վրաստանի որոշումներով՝ Քոստովոյէն իրենց ստորաբաժանումների դուրս բերելու կապակցութեամբ:

Արթուր Աղաբեկեան յայտնած էր որ իր կարծիքով Կոյնորիքը հրամանատարութիւնը կը փորձէր այդ փաստերը չբաղադրականացնել, բայց պատասխաններէն ակնյայտ կ'երեւէր, որ այդ երկու երկիրները չեն հանդուրժար Քոստովոյի անկախացումը եւ այդ պատճառով իրենց զորքերը համաձայն Քոստովոյէն: Բանակային բարձր կոչում ունեցող զորավար Արթուր Աղաբեկեանը հանդիպումներ ունեցած է նաեւ հայ զինձառայողներու հետ, որոնք խաղաղապահ առաքելութեամբ կը գտնուին Քոստովոյ:

Արթուր Աղաբեկեանի դիտարկումով, յառաջիկայ 5 տարիներու ուղղակի անհնարին պիտի ըլլայ խաղաղապահ զորքերու դուրս բերումը Քոստովոյէն, որովհետեւ Քոստովոյի մէջ այս զորքերու ներկայութիւնը կը բխի նաեւ Քոստովոյի ժողովուրդի շահերէն: Բնաւորապէս ակնարկ մը ըլլայ ՆԱԹՕ-ն ներկայացնող ու-

ժերը դուրս բերելու մասին, անմիջապէս Քոստովոյի բնակչութիւնը կը սկսի քննարկել հարցը, եւ բոլոր գիտելիքներէն, քաղաքներէն՝ հասարակական կազմակերպութիւնները անմիջապէս կը դիմեն հրամանատարութեան եւ անընդունելի կը համարեն խաղաղապահ զորքերու դուրսբերումը:

Ուղղակի գուգահեռ կատարելով Վարաբաղի ու Քոստովոյի ինքնապաշտպանութիւնը միջեւ եւ անդրադառնալով այն հարցին, որ Քոստովոյի ճանաչումը կը մնայ՝ որեւէ կերպով առնչուիլ «Լաւարաբաղի ինքնորոշման ճանաչման հետ, գոր. Աղաբեկեան, յայտնած է, որ Քոստովոյի ճանաչման օրերուն շատերը յայտարարած են, որ այս պարագան նախադէպ չի կրնար ըլլայ այլ դէպքերու համար: Սակայն, ըստ գոր. Աղաբեկեանի. «Կը յայտարարենք՝ չեն յայտարարի, կը ցանկանան՝ չեն ցանկանայ, Քոստովոն նախադէպ է, այն իմաստով, որ այնտեղ ես դուրս ել ինքնորոշման իրաւունքի հարցը: Եւ եթէ առկայ է ինքնորոշման իրաւունքի հարց, ուրեմն առկայ է նախադէպ»:

Հայրենասէր հայը, որ կուսակցութեան մը նեղ պատեանին մէջ չէ մտած, լաւ կը հասկնայ, թէ ազգասիրութեամբ ի՞նչ կը շահի եւ ազգամոլութեամբ ի՞նչ կը կորսնցնէ:

Խորանայէ առաջ այս գիտիքն խորաթաքուն ծալքերուն մէջ, պէտք է յստակ գատորշում մը ընել, թէ ո՞ր մէկը տրամաբանական գծով անսայթաք ուղղութիւն կու տայ հայ ժողովուրդի անկատարիքն ու գայն կը տանի լաւէն լաւագոյնին, եւ ո՞ր մէկը գզգզական անգուսպ կիրքերէ խթանած կ'առաջնորդէ դէպի գահավիժում:

Պէտք է վախճալ, սարսափելի ներքին այն խաւարակուտ հակումներէն, որոնք մոլեռանդութեան կը խթանուին ու կ'անդամալուծեն մարդկային ուղեղը:

Փիտոթը, որ կը սկսի ազգամոլին գզգզական բռնկումներուն մէջ, անկարագրելի է:

Մարդը՝ եղեր է ազգամոլ կամ աղանդամոլ, կը խօսի ու կը վիճի այնպիսի կոյր եսակամութեամբ, կ'ուզէ տարհանուիլ քեզ, թէ անվայական է եւ գիտէ ճշմարտութեան վերջին բառը: Մոլեռանդութիւնը մտային պիտանիք մըն է, եւ կը բացալայտի յստակապէս քաղաքականութեան եւ ազգային հանգուցային հարցերու մէջ տարակարծութիւններու դրսևորումով: Բայց այն կիրքը, զոր կուսակցամոլը կը սնուցանէ իր գզգզարաններուն հնոցին մէջ, բոլոր տեսակի մոլեռանդութիւնները ետեւ կը թողու, մինչեւ իսկ կրօնական աղանդամոլներու սնայաշտութիւնը:

Ազգասիրութիւնը եւ ազգամոլութիւնը երկու ներհակ հասկացութիւններ են, շրջուած սեղանի մը պատկերով:

Կամ հայրենասէր պիտի ըլլաւ ու պիտի բարացուցէ բարեկիրք հայու դաստիարակութիւնը եւ կամ կուսակցամոլ պիտի ըլլաւ ու պիտի յայտարարէ անասնական կիրքերու վայրագութիւնը:

Հայրենասիրութիւնը կամ ազգասիրութիւնը առաքինագար զգացում մըն է, որ կը ներդաշնակէ արտիք բարակումներու կշռոյթը, քահաւորելով իրաւ հայու գիտակցութիւնը, որ յարգես գաղափարի հակառակորդը եւ ոչ թէ խաւարին մէջ սողակելով՝ գայն թիկունքէն դաշունահարես:

Ազգամոլ հայը, ո՞ր կուսակցութեան ալ գաղափարախօսութեան մտենակը ըլլայ՝ ՄԻԱԿԱՆԻ Է, յամառօրէն տարակարծիք ամէն հարցի շուրջ,

# ՀԱՏՈՒԱԾԱՄՈՂՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԱՂԷՏ ՄԸՆ Է

որ չի ներդաշնակուի իր համոզումի ուղղութեան հետ:

Տիեզերական շարժ ու ժխոր կը ստեղծէ, ծովերն ու ովկիանոսները կ'ալեկոծէ, երբ իր ընդդիմախօսները տեղի չեն տար իր ընդվզումներուն եւ պորթլումներուն առջեւ:

Հատուածամոլը խորակորոյս հիւանդ մըն է: 2ի խօսիլը՝ կը հայտնէ, չի դատելը՝ կը դատապարտէ, չի տրամաբանելը՝ կը ստէ, չի ծառայելը՝ կը հրամայէ, չի գոհելը՝ կը գրկէ, չի հանդարտիլը՝ կը սպառնայ եւ պատրաստ է ի հարկին գործածելու իր վերջին անգորութեան գէճը՝ բռունցքը:

Մոլեռանդին հոգեկան հիւանդութիւնը կը նմանի այն քոլաճածուկ հիւանդութիւններուն, որոնք առանց մարդուն գիտութեան գաղտնօրէն կը գործեն անոր օրկանիքի մէջ եւ ժամանակի ընթացքին յանկարծ կը յայտնուին ու կը վտանգեն անոր կեանքը:

Երբ կը խօսինք, կը բանավիճինք, կը գրենք ու կը թողնենք, պէտք է լրջօրէն կշռենք մեր խօսքերը, որ բխին մեր սրտի ու մտքի զուլ ակերէն եւ ոչ թէ վրիժառութեան զարշափոտ կիրքերէն:

Ազգասիրութիւնը դէպի միասնականութիւն կ'առաջնորդէ հայութիւնը, իսկ ազգամոլութիւնը դէպի անմիաբանութիւն ու փլուզում:

\*\*\*

Մոլեռանդութիւնը արմատացաւ հայ մարդուն մտածողութեան մէջ այն օրէն սկսեալ, երբ հայ կեանքին մէջ տեղծուեցան ազգային կուսակցութիւնները իրենց անկամիքով տարակարծութիւններով ու հակամարտութիւններով:

Գաղափարախօսութիւններու գոտեմարտը, հին օրերու ուժգնութեամբ դէն կը յարատեւէ եւ յոյս չկայ, որ օր մը դասակարգութեան կիրքերը կը հանդարտին եւ փառասէնք հայեր մոլեռանդութեան կապանքներէն ազատագրուած, սիրող Աստուծոյ առջեւ կը խնամարտին եւ իրենց համագործակցութեան ուխտը կը կատարեն:

Հին վտանգալիք օրերուն՝ լեռներու սատուցիկ լանջերուն մաքսառող զինուորներուն համար, ոչ

մէկ բան այնքան անուշ էր, որքան հայրենիքը, որուն սիրուն մտոցան իրենց կեանքը, մտոցան իրենց աշխարհային պահանջները, ու ամէն ճակատի վրայ ցոյց տուին իրենց պատրաստակամութիւնը հայրենի ժողովուրդին ազատութեան համար պայքարելու եւ գոհուելու:

Այդ մարտականութեան սքանչելի ոգին մենք կը տեսնենք այս անդրադիմաճանակներուն մէջ, ուր մտաւորականը, հոգեւորականը, կուսակցականը, պետական պաշտօնեան իրենց տիրուածութեան անջնջացած համատարի սրտով եւ օրհնակելի հայրենասիրութեամբ ամբողջ հայութիւնը կը տանին յաղթանակէ յաղթանակ:

Դժբախտաբար, այս լուստար օրինակները կը մնան թաղուած պատմութեան մէջ: Գործող դէպակարներ ու առաջնորդներ պէտք եղած ձեռով ուղեցոյց չեն ըլլար անորահաս հայրորդներու, որոնք կոչուած են վաղուան մեր յոյսերն ու խոստումները ըլլալու:

Հայ ժողովուրդին տոհմաշէն ասանդութիւնները, բարոյական, իմացական անցեալի հարուստ ժառանգութիւնը, հերոսներու, մարտիրոսներու եւ նահատակներու դիմագրական դրոսագները ասան ու վաղանցուկ տոնակատարութիւններ չեն, այլ հայութեան ամենագոր կրօնանքներ են, բունատիրութեան, տգիտութեան եւ այլատերումի ազգային վտանգներու եւ սպառնալիքներու դէմ:

Այս անտրանալի իրողութիւնները, իրաբանչիւր ազգասէր հայու փառքը պէտք է ըլլայ, որ պատմական հերոս ժողովուրդի մը հոգիէն գոյութիւն առած հայ մըն է, որ իր հայու ծագումին պատիւ կը բերէ:

Մոլեռանդ մարդիկ՝ միշտ պիտի ըսեն ու կրկնեն, թէ կը խօսին յանուն ճշմարտութեան եւ ոչ մէկ խնդրի շուրջ պիտի համաձայնին, մինչեւ որ հարցին լուծումը հաշտ չըլլայ իրենց համոզումներուն հետ:

Եթէ գանձը իրապէս մարդ պիտի նկատենք մարդկայնութեան առումով, պէտք է իրենց գաղափարի ընդդիմախօսներուն հանդէպ հանդուր-

ժողութիւն եւ յարգանք ցուցաբերեն:

Հատուածամոլ ղեկավար մը, որ անգոր է դիմադրելու իր մարդկային տկարութիւններուն եւ կ'ուզէ իր գաղափարի հետեւորդները առաջնորդել պէտք ունի նման, կը տեսնէ դժբախտ օր մը՝ իր ամօթալի ու անխուսափելի անկումը:

Տիեզերական օրէնք է, որ ամէն սխալ կամ սայթաքում, ամէն անիրաւութիւն կամ գեղձարարութիւն, ուշ կամ կանուխ քողակերծուի, մերթ յանցաւորին մահէն առաջ եւ մերթ անոր մահէն ետք:

Անխուսափելի է մեր կամայ ակամայ գործած մեղքերուն հրապարակումը, եղեր ենք ժողովուրդի մը առաջնորդը, կուսակցութեան մը ղեկավարը կամ ծովի մը հոգեւոր հովիւը:

Հասարակութեան մէջ, եթէ կա մէկը, որ սեւեւաբիք կը դիտուի բոլոր ուղղութիւններէ, անկառ ոչ արուեստագէտն է, ոչ մտաւորականը, ոչ միւլիոնատերը, այլ իշխանութեան մը ղեկավարը:

Ներկայիս հայ ժողովուրդին ուղածը իր ղեկավարներէն բոլոր հայերու միասնականութիւնն է եւ ոչ թէ հայը հայուն դէմ լարող պատուհասիչ հատուածամոլութիւնը:

\*\*\*

Պարսկաստանի թագաւորը տղայ մը ունէր, որ կուգ ծնած էր եւ տղուն այս ցաւազին վիճակը մեծ վիշտ կը պատճառէր արքայական ընտանիքին:

Երբ գաւաթաւոր ընտել տարեկան եղաւ, խնդրէր հօրմէն, որ իր հասակով արձան շինել տայ ու գետեղէ իր ննջարանին պատուհանին առջեւ գտնուող տաղարարին մէջ:

Խնդրանքը կատարուեցաւ ու կոփուեցաւ իր գեղակերտ արձանը, ստանց սակայն իր կունակի կուգին: Տղան օրուան բոլոր ժամերուն հիասքանչ կը դիտէր մարմարակերտ արձանը եւ դիտեց երկար տարիներ, միշտ հիացումով, մինչեւ որ եղաւ քսանամեայ երիտասարդ մը:

Օր մըն ալ հայելիին մէջ նկատեց ինքզինքն ու տեսաւ, որ կուզ անհետացեր էր կունակէն:

Հայուն հայրենիքն ալ այսօր ճիշդ այդ գեղեցիկ արձանն է, առուց ու երիտասարդ: Նայեցէք անձնապաշար սքանչացումով իր հրաշալոյս համայնապատկերին եւ վստահ եղէք, որ մեր հոգիին կուգին ալ կը հարթուին ու կ'ըլլանք կատարեալ հայեր ու հայրենասէրներ:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԶՆՅ. ՏԻՒԿԵՐԵԱՆ